

**«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019թ.

ԵՐԵՎԱՆ 2020

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

25.06.2020

N 012010

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ. Գևորգյան

Առողիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ
Կենսաթոշակային Ֆոնդի
Բաժնետիրոջը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ Կենսաթոշակային Ֆոնդի (Ֆոնդ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ֆոնդի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Առողիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրարելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ֆոնդի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ֆոնդը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ֆոնդի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ֆոնդի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևավոյենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ֆոնդը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ֆոնդի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Լ.Ղևոնդյան



25.06.2020թ.

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին
հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	Ծանոթ.	2019թ.	<i>(հազար դրամ)</i> 2018թ.
Տոկոսային եկամուտ	5	1,434	-
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ	6	26,124	-
Ընդամենը գործառնական եկամուտ		27,558	-
Ներդրումային կառավարման վճարներ		(578)	-
Աուդիտի ծախս		(1,500)	-
Ընդամենը գործառնական ծախսեր		(2,078)	-
Տարվա շահույթ		25,480	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		25,480	-

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթ.	2019թ.	(հազար դրամ) 2018թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		136	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	7	1,369,823	-
Ընդամենը ակտիվներ		1,369,959	-
Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտք		1,093	-
Ընդամենը պարտավորություններ		1,093	-
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ	8	1,368,866	-
Ընդամենը փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ և պարտավորություններ		1,369,959	-

Գործադիր տնօրեն
Էդգար Էվոյան



25.06.2020թ.

Գլխավոր հաշվապահ
Կարեն Խաչատրյան



**Փայատերերին վերագրելի գուտ ակտիվներում փոփոխությունների մասին
 հաշվետվություն
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	<i>(հազար դրամ)</i>
	Փայատերերին վերագրելի գուտ ակտիվներ
Մնացորդը առ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Փայերի թողարկումներ և մարումներ	
Փայերի թողարկում	1,343,386
Փայերի մարում	-
Փայերի գործարքից գուտ աճ	1,343,386
Փայատերերին վերագրելի ակտիվներից գուտ աճ տարվա ընթացքում	25,480
Մնացորդը առ 31.12.2019թ.	1,368,866

**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	<i>(հազար դրամ)</i>	
	2019թ.	2018թ.
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ստացված տոկոսներ	1,434	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռք բերում	(1,369,823)	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից օգուտ	26,124	-
Այլ ծախսեր	(985)	-
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	(1,343,250)	-
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Փայերի թողարկումից ստացված միջոցներ	1,343,386	-
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	1,343,386	-
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)</i>	136	-
Դրամական միջոցների մնացորդներ տարվա սկզբում	-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-	-
<i>Դրամական միջոցների մնացորդներ տարվա վերջում</i>	136	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն

«ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ պահպանողական կենսաթոշակային ֆոնդը (այսուհետև՝ Ֆոնդ) հրապարակային պայմանագրային ֆոնդ է: Ֆոնդը հիմնադրվել է 2019թ. օգոստոսի 16-ին՝ Հայաստանի Հանրապետությունում անժամկետ, որպես բաց ստանդարտ կենսաթոշակային ֆոնդ՝ համաձայն ՀՀ օրենսդրության, և ՀՀ կենտրոնական բանկի թիվ 114-Ա որոշման: Ֆոնդի ներդրումային գործունեությունը կառավարվում է «ՋԵՆԵՐԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ (այսուհետև՝ Կառավարիչ) կողմից, գրանցման համար՝ 5: Կառավարչի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան փողոց, 11:

Ֆոնդի հիմնական նպատակը կապիտալի ընթացիկ եկամտի և կայուն աճի ապահովումն է՝ բաժնային արժեթղթերում և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքներում ֆոնդի ակտիվների մինչև 25 տոկոսի չափով ներդրումներ կատարելու միջոցով:

Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետության կամ ՀՀ Կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում՝ ֆոնդի ակտիվների առավելագույնը 50%-ի չափով: Ֆոնդի ներդրումները կարող են կատարվել նաև բանկային հաշիվներում և բանկային ավանդներում՝ ֆոնդի ակտիվների մինչև 40%-ի չափով, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերում ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ֆոնդի ակտիվները կարող են ներառել նաև արտասահմանյան արժեթղթեր՝ ֆոնդի ակտիվների մինչև 40%-ի չափով, ինչպես նաև ներդրումներ արտարժույթով՝ ֆոնդի ակտիվների մինչև 40%-ի չափով:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ֆոնդի գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՀՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա՝ բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ16 “Վարձակալություն”;
- ՖՀՄՄԿ 23 “Շահութահարկի հաշվառման մոտեցման անորշություն”:

Նշվածներից ոչ մեկը չունի նշանակալի ազդեցություն Ֆոնդի ֆինանսական հաշվետվություններին վրա:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ֆոնդի հետագա ֆինանսական հաշվետվություններին վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Արտարժույթային գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի՝ այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

Տոկոսային եկամուտը և ծախս

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Ֆոնդն արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքների բոլոր պայմանագրային պայմանները, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ստացված կամ ստացվելիք տոկոսները, վճարված կամ վճարվելիք տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով: Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Ծախսեր

Բոլոր ծախսերը, ինչպես նաև կառավարման ծախսերը և վճարները կապված կենսաթոշակային ֆոնդի գծով պարտականությունների իրականացման հետ կարող են ծախսագրվել Ֆոնդին: Ֆոնդից գանձվող կառավարման վճարը կազմում է զուտ ակտիվների տարեկան 1.8%-ը:

Ֆինանսական գործիքներ

Ֆոնդը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ֆոնդը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ֆոնդի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.

Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից

առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ֆոնդը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ֆոնդը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ֆոնդը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ֆոնդը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿԿ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ.

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետզման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ֆոնդի կողմից համատեղ դեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿԿ չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ֆոնդի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿԿ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.

Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ֆոնդի պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման գործարքներ

Ֆոնդն ունենում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման պայմանագրեր, ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի պայմանագրեր: Ֆոնդն օգտագործում է հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերը որպես իր գանձապետական կառավարման տարր: Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ ապագայում հետ գնելու այդ ֆինանսական ակտիվը վճարված գումարին կամ փոխանակված այլ հատուցմանը համարժեք գումարով՝ գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ: Ֆինանսական ակտիվները, որոնք վաճառվում են հետգնման պայմանագրերով, շարունակում են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում, իսկ այս պայմանագրերի դիմաց ստացված հատուցումը հաշվառվում է որպես ապահովության միջոց հանդիսացող ավանդ բանկերի հետ ավանդային գործիքներում:

Ֆոնդը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե դրա հետ միասին փոխանցվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Հարկում

Ֆոնդին վերաբերող ՀՀ գործող օրենքի համաձայն Ֆոնդն ազատված է շահութահարկից, եկամտային հարկից կամ կապիտալի հավելաճի և այլ տեսակի հարկատեսակներից: Ֆոնդի փայտերերից յուրաքանչյուրն առանձին պատասխանատվություն է կրում ֆոնդից ստացված իր եկամուտների մասով:

4. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ֆոնդը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ֆոնդի կառավարիչը կատարել է մի շարք գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների, ինչպես նաև հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ֆոնդի կառավարչի փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում:

Ֆոնդի կառավարիչը որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գնահատումներին:

Ֆոնդը ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1: Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
- Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

5. Տոկոսային եկամուտ

	<i>(հազար դրամ)</i>	
	2019թ.	2018թ.
Փայեր	1,434	-
Ընդամենը տոկոսային եկամուտ	1,434	-

6. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից օգուտ

	<i>(հազար դրամ)</i>	
	2019թ.	2018թ.
Փայեր	26,124	-
Ընդամենը	26,124	-

7. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	<i>(հազար դրամ)</i>	
	2019թ.	2018թ.
Փայեր	1,369,823	-
Ընդամենը	1,369,823	-

8. Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ

	2019թ.		2018թ.	
	Փայերի քանակ	Փայերի գումար հազ. դրամ	Փայերի քանակ	Փայերի գումար հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Փայերի թողարկում	1,333	1,343,386	-	-
Փայերի մարում	-	-	-	-
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	1,333	25,480	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,333	1,368,866	-	-
Ակտիվների զուտ արժեքն ըստ փայերի ՀՀ դրամ	-	1,027	-	-

Ֆոնդի փայերն առաջարկվում են մեկ փայի դիմաց դրա զուտ ակտիվների արժեքով հաշվարկման օրը մինչև UTC+4 ժամային գոտու ժամը 11:00 Ֆոնդի Կառավարչին հասանելի ամենաթարմ տեղեկատվությամբ («զուտ ակտիվների արժեքի որոշման ժամ»): Աշխատանքային օրն այն օրն է, երբ ՀՀ կարգավորող շուկան բաց է: Փայերը կմարվեն զուտ ակտիվների այն արժեքով, որը կգործի զուտ ակտիվների արժեքի որոշման ժամի դրությամբ: Ֆոնդի կողմից ստացված ներդրումային եկամուտը կուտակվում և վերստին ներդրվում է Ֆոնդում և հաշվի է առնվում փայի արժեքը որոշելիս:

9. Ռիսկի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ֆոնդը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ
- Արտարժույթային ռիսկ

Ֆոնդը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ֆոնդի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքները

Ֆոնդի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկերը, ներկայացված են ստորև.

- Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

	<i>(հազար դրամ)</i>			
	Իրական արժեքով չափվող		Ամորտիզացված արժեքով չափվող	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	136	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,369,823	-	-	-
Ընդամենը	1,369,823	-	136	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Կրեդիտորական պարտքեր	-	-	1,093	-
Ընդամենը	-	-	1,093	-

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները և կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

(դ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքի հիերարխիան ներկայացված է ստորև՝

	Սակարդակ2	
	2019թ.	2018թ.
31 Դեկտեմբեր		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,369,823	-
Ընդամենը	1,369,823	-

Իրական արժեքի չափման բացահայտումներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտարկելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

Աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Իրական արժեք, հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,369,823	Գնանշված արժեք	Մակարդակ 2	Ոչ կիրառելի
Կրեդիտորական պարտքեր	1,093	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:	Մակարդակ 3	Չկան այդպիսիք

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ֆոնդը կրում է պարտքային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ֆոնդը փորձում է կառավարել իր պարտքային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ռոջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ֆոնդը կնքում է վաճառքի և հետգնման պայմանագրեր: Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրեր, Ֆոնդին թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում, կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ֆոնդը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար:

Ֆոնդի պարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<i>(հազար դրամ)</i>	
	2019թ.	2018թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	136	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,369,823	-
Ընդամենը	1,369,959	-

Դրամական միջոցներ բանկում

Ֆոնդը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ֆոնդի կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ֆոնդի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ֆոնդի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Համաձայն Ֆոնդի քաղաքականության՝ Ֆոնդը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ, որպեսզի սահմանված ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Ֆոնդի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	<i>(հազար դրամ)</i>	
	2019թ.	2018թ.
31 Դեկտեմբեր		
Կրեդիտորական պարտքեր	1,093	-
	1,093	-

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույթային ռիսկ

Ֆոնդին բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույթների տատանման արդյունքում: Ֆոնդի տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ֆոնդի քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույթի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույթների տատանումների արդյունքում:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ֆոնդի գործառնական արժույթով չեն պահվում: Կառավարիչն ունի սահմանված քաղաքականություն՝ Ֆոնդի վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը կառավարելու համար՝ Ֆոնդի կանոններում սահմանված արտարժույթի դիվերսիֆիկացման պայմանների համաձայն: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ամբողջությամբ գործառնական արժույթով էին:

10. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

Վերջին ժամանակներում կորոնավիրուսային համավարակի (COVID-19) արագ զարգացման կապակցությամբ շատ երկրներ, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, նախաձեռնեցին կարանտինային միջոցառումներ, որոնք էական բացասական ազդեցություն ունեցան տեղական շուկայում ձեռնարկատիրական գործունեության մակարդակի և ծավալների վրա: Ակնկալվում է, որ ն՝ համավարակը, և՛ դրա հետևանքները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցները կարող են ազդել տարբեր ոլորտներում գործող ընկերությունների գործունեության վրա: Ֆոնդը այս համավարակը համարում է որպես հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպք, որի քանակական ազդեցությունը տվյալ պահին չի կարող գնահատվել վստահության բավարար մակարդակով:

Ներկայումս ղեկավարությունը վերլուծում է միկրո և մակրոտնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Ֆոնդի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունավետության վրա: